Funded by the European Union

ORGANIC AGRICULTURE SUPPORT INITIATIVE

AUSTRIAN DEVELOPMENT AGENCY

OASI2016/048
12.10.2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին
ք. Վանաձոր 2001, Հայքի հրապարակ
Լոռու մարզ
Հայաստանի Հանրապետություն

Հարգելի պարոն Նալբանդյան,

Ավստրիական զարգացման գործակալության անունից թույլ տվեք սիրով տեղեկացնել, որ *սույն թվականի սեպտեմբերի 29-ին* Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (ՕԳԱՆ) ծրագրի շրջանակներում *հայտարարվեց Փոքր ֆերմերային աջակցության ծրագրի հայտամրցույթը, որը նախատեսված է փոքր ֆերմերների և ֆերմերային խմբերի համար*:*

Մեծապես կարևորելով մարզպետարանի դերը Հայաստանում օրգանական գյուղատնտեսության նախադրյալների ներդրման և փոքր ֆերմերներին ուղղված աջակցության գործընթացում՝ *խնդրում ենք Ձեր օժանդակությունը կից ներկայացված բաց հայտամրցույթի հրավերը ամբողջ մարզով հնարավորինս լայնամասշտաբ տարածելու հարցում:* Հնարավորության դեպքում, խնդրում ենք հրավերը փակցնել մարզպետարանի տեղեկատվական ցուցատախտակին, ինչպես նաև ուղարկել բոլոր համայնքների ղեկավարներին հայտարարությունը տարածելու խնդրանքով: Որպեսզի բազմաթիվ ֆերմերներ հնարավորություն ունենան տեղեկանալու և օգտվելու նման աջակցությունից, խնդրում ենք, հնարավորության դեպքում, նաև հայտարարությունը տեղադրել Ձեր կայքէջում, ուղարկել էլեկտրոնային ցուցակի հասցեներով կամ պարզապես տեղեկացնել ցանկացողներին նման հնարավորության մասին:

Սույն նամակին կից ներկայացված է նաև հայտամրցույթի ամբողջ փաթեթը հայերեն լեզվով, որը կարող եք նաև գտնել և ներբեռնել Ավստրիական զարգացման գործակալության կայքէջից հետևյալ հղումով. **http://www.entwicklung.at/ada/calls-auftraege/calls-detail/artikel/organic-agriculture-support-initiative-oasi/**

Սիրով ակնկալում ենք Ձեր համագործակցությունը:

Հարգանքով՝

Դեյվիդ Սուքենհուբեր
ՕԳԱՆ ծրագրի ղեկավար

Հասմիկ Ալթունյան
ՕԳԱՆ, Փոքր ֆերմերային
աջակցության ծրագրի համակարգող

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ
Օրգանական գյուղատնտեսություն աջակցության նախաձեռնություն
Էրեբունի-Պլազա բիզնես-կենտրոն, սեն. 712 - 716
ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1
Հեռ.՝ +374 60 650 281
Էլ. հասցե՝ oasi@ada.gv.at

**Նշում. Սույն ծրագրի շրջանակներում փոքր ֆերմերներ և փոքրածավալ վերամշակողներ են համարվում այն անձինք (ֆերմերները, ֆերմերային ընտանիքները, ֆերմերային գրանցված և չգրանցված խմբերը, անհատ ձեռներեցները, ընտանեկան գյուղատնտեսական բիզնեսները և այլն), ովքեր ունեն գործող ֆերմերային տնտեսություն, և/կամ մշակում են հող, զբաղվում են վայրի խոտաբույսերի և հատապտուղների հավաքմամբ և/կամ գյուղատնտեսական/մեղվաբուծական արտադրանքի արտադրությամբ և վերամշակմամբ:*

ՕԳԱՆ ծրագրի մասին

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և համաֆինանսավորվում ու իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից, որն, իր հերթին, հանդիսանում է Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) գործառնական միավորը: Ծրագրի նպատակն է զարգացնելու Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը: Ծրագիրը կնպաստի տեղական և միջազգային շուկաներում հայկական օրգանական մթերքի հաջող իրացմանը՝ բարելավելով իրավական և օրենսդրական դաշտը և տրամադրելով համապարփակ մարքեթինգային աջակցություն: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 3.3 մլն եվրո:

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագիրը կապեր է ստեղծում հայ ֆերմերների և վերամշակողների և հայ գնորդների և շահագրգիռ եվրոպական ու այլ միջազգային ընկերությունների միջև: Բացի այդ, հայ օրգանական մթերք արտադրողները հնարավորություն են ստանում մասնակցելու միջազգային օրգանական տոնավաճառներին: Աջակցության գործառույթները, այդ թվում վերապատրաստման և սերտիֆիկացման ծառայությունները, իրականացվում են օրգանական գյուղատնտեսությանն աջակցող կառույցների դասընթացների միջոցով: Ֆերմերներին, ֆերմերային խմբերին, կոոպերատիվներին և վերամշակողներին տրամադրվում է ֆինանսական և տեխնիկական աջակցություն՝ հանգեցնելով օրգանական արժեշղթայի մասնակիցների և ծավալների զգալի աճի:

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ
Օրգանական գյուղատնտեսություն աջակցության նախաձեռնություն
Էրեբունի-Պլազա բիզնես-կենտրոն, սեն. 712 - 716
ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1
Հեռ.՝ +374 60 650 281
Էլ. հասցե՝ oasi@ada.gv.at